

**ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎՐԱ
ՏՆՆՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅԱՆ ԱԶԻՅՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ
(էլեկտրատեխնիկական արդյունաբերության օրինակով)**

ԱՐՄԵՆ ՇԱՄՇՅԱՆ


Գիտատեխնիկական առաջադիմության արագացման հիման վրա արտադրության ինտենսիվացումը և արդյունավետության բարձրացումը մեր երկրի էկոնոմիկայի զարգացման արդի փուլի կարևորագույն ուղիներից է: ՄՄԿԿ Կենտկոմի հոկտեմբերյան (1984 թ.) պլենումում արտասանած ճառում Կ. Ու. Չեռնենկոն ընդգծեց, որ «էկոնոմիկայի ինտենսիվացման ռեւերի վրա կարելի է փոխադրել գիտատեխնիկական առաջադիմության հիման վրա միայն: Պետք է ամենուրեք ձգտել աշխատանքի արտադրողականության վրճառական բարձրացման և արտադրանքի որակի բարելավման»¹:

Կ. Մարքսը, խոսելով աշխատանքի արտադրողականության աճի գործոնների մասին, դրանց մեջ կարևորագույններից է համարում գիտության և տեխնիկայի զարգացման մակարդակը: «Աշխատանքի արտադրողական ուժը, — դրել է Կ. Մարքսը, — որոշվում է բազմաբարդ հանգամանքներով, իմիջիպիսեմբանի վրա հիմնված միջին աստիճանով, գիտության զարգացման մակարդակով ու նրա տեխնոլոգիական կիրառման աստիճանով, արտադրական պրոցեսի հասարակական կոմբինացիայով, արտադրության միջոցների չափերով ու էֆեկտիվությամբ և, վերջապես, բնական պայմաններով»²: Ներկայումս նշված գործոնների մեջ առաջնակարգը գիտության ու տեխնիկայի զարգացումն է. բավական է նշել, որ վերջին 10 տարիներին արդյունաբերության մեջ աշխատանքի արտադրողականության աճի 68%-ը ձևեր է բերվել այս գործոնի հաշվին: Չնայած դրան, պլանավորման պրակտիկայում չկա համընդհանուր ընդունված մեթոդիկա, որի միջոցով հնարավոր լիներ հստակ որոշել տեխնիկական առաջադիմության ազդեցության չափը արտադրության արդյունավետության և, մասնավորապես, աշխատանքի արտադրողականության աճի վրա: Եթե պլանավորման ստորին օղակներում (ձեռնարկություններ, միավորումներ) օգտագործվում է ըստ գործոնների աշխատանքի արտադրողականության հաշվարկման մեթոդը, ապա ավելի բարձր մակարդակներում (մինիստրություններ, պետական) կիրառվում է դրա հաշվարկման մեկ այլ, այսպես կոչված, խոշորացված մեթոդը, ելնելով տեխնիկական առաջադիմության մի շարք ցուցանիշների (աշխատանքի էլեկտրա, մեքենա կամ ֆոնդադինվածություն) և աշխատանքի արտադրողականության միջև սահմանված հարաբերակցությունից: Ակնհայտ է, որ հեռանկարային պլանավորման մեջ աշխատանքի արտադրողականության վրա այն բազմաթիվ գործոնների ազդեցությունը, որոնք հաշվի են առնվում ընթացիկ պլանավորման ժամանակ, հնարավոր չէ որոշել: Այդ իսկ պատճառով հեռանկարային պլանավորման մեջ կարող է կիրառվել միայն հաշվարկման խոշորացված մեթոդը: Տնտեսագիտական գրականության մեջ միասնական կարծիք չկա այս մեթոդի կիրառման և նրա օգտագործման ոլորտների վերաբերյալ: Ումանք պնդում են, որ էլեկտ-

¹ «Սովետական Հայաստան», 24. X. 1984:

² Կ. Մարքս, Կապիտալ, հ. I, Երևան, 1954, էջ 46:

³ Հաշվարկված է «Народное хозяйство СССР в 1982 г.» մոդուլածուի 92-րդ էջի տրված չափերի հիման վրա:
Լաթեր 2—2



րա, մեքենա կամ ֆոնդադինվածության ցուցանիշների միջոցով աշխատանքի արտադրողականության աճի տեմպերը պլանավորելն ընդունելի է միայն պլանավորման բարձրագույն օղակներում⁴: Ուրիշները գտնում են, որ այն կարելի է կիրառել միայն հեռանկարային պլանավորման մեջ⁵:

Մեր կարծիքով տարակարծության առիթը ոչ թե բուն մեթոդն է, այլ նրա կոնկրետ կիրառման ընթացքում ժողովրդական տնտեսության տարբեր ճյուղերի առանձնահատկությունների անտեսումը: Այսպես, կթե էլեկտրագինվածության ցուցանիշը աշխատանքի արտադրողականության հաշվարկման համար կիրառելի է արդյունաբերության էներգատար ճյուղերում, ապա այն չի կարող հաշվարկների ճշտության նույն արդյունքներն ապահովել այլ ճյուղերում: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է յուրաքանչյուր ճյուղի և նույնիսկ միավորման համար հետազոտել, բացահայտել ու ընտրել այնպիսի ցուցանիշներ, որոնց միջոցով հնարավոր լինի կապ սահմանել տեխնիկական առաջադիմության և աշխատանքի արտադրողականության միջև: Այս տեսակետից դիտարկենք վերը նշված ցուցանիշների կիրառման հնարավորությունն էլեկտրատեխնիկական արդյունաբերության մեջ: Յուրաքանչյուր ճյուղում տվյալ պահին օգտագործվում են որոշակի կենդանի աշխատանք և ֆոնդեր (առարկայացած աշխատանք), որոնց հարաբերակցությունը ձևավորում է արտադրության ճյուղային կառուցվածքը: Միևնույն ժամանակ, ճյուղի կազմի մեջ մտնում են տեխնիկական տարբեր հագեցվածություն ունեցող ձեռնարկություններ և միավորումներ: Այդ պատճառով ձեռնարկությունների ու միավորումների տեխնիկական զինվածության ցուցանիշները նպատակահարմար է համադրել համապատասխան ճյուղային ցուցանիշների հետ: Դա հնարավորություն կընձեռի բացահայտելու արտադրողական ուժերի զարգացման որակական մակարդակն ինչպես ճյուղերում, այնպես էլ առանձին ձեռնարկություններում և միավորումներում (պարզել միջին ճյուղային արտադրողականությունը, աշխատանքի էլեկտրա, մեքենա կամ ֆոնդադինվածությունը, դրանց մակարդակը առանձին ձեռնարկություններում և միավորումներում և այլն): Միջին ճյուղային այդ ցուցանիշներն արտացոլում են իրական, ժամանակի տվյալ պահին ձեռք բերված արտադրության պայմաններին համապատասխանող ինչպես անհրաժեշտ կենդանի և առարկայացած աշխատանքային ծախսումների մեծությունը, այնպես էլ արտադրության տեխնիկական հագեցվածության աստիճանը: Հենց դրանց միջոցով էլ պետք է գնահատել առանձին ձեռնարկությունների և միավորումների զարգացման մակարդակի որակական տարբերությունը: Այդ նպատակով մեր կողմից քննվող էլեկտրատեխնիկական արդյունաբերության ճյուղում համամիութենական արդյունաբերական միավորումների միջին ճյուղային ցուցանիշները դիտենք որպես համեմատական բազա և ըստ այնմ գնահատենք մեր հանրապետության առանձին արտադրական միավորումների զարգացման մակարդակը: Աղյուսակ № 1-ում բերված տվյալները բնութագրում են ֆոնդա, մեքենադինվածության, ֆոնդահատույցի և աշխատանքի արտադրողականության ցուցանիշների դինամիկան ՍՍՀՄ էլեկտրատեխնիկական արդյունաբերության մեջ, համամիութենական արտադրական միավորումներում (ՀՍՄ) և դրանց կազմի մեջ մտնող Հայկական ՍՍՀ արտադրական միավորումներում (ԱՄ)⁶:

№ 1 աղյուսակի տվյալներից երևում է, որ ՍՍՀՄ էլեկտրատեխնիկական

⁴ «Экономические науки», 1983, № 7, с. 4; «Серия экономическая», 1978, № 4, с. 59.

⁵ «Вестник машиностроения», 1977, № 7, с. 77; «Повышение экономической эффективности общественного производства», Днепропетровск, 1975, с. 91.

⁶ Հաշվածում էլեկտրատեխնիկական արդյունաբերության ճյուղին և նրա առանձին օբյեկտներին վերաբերող տվյալները հաշվարկված են մեր կողմից՝ էլեկտրատեխնիկական արդյունաբերության միևնույն տարիքի, նրա համամիութենական արտադրական միավորումների և հանրապետության արտադրական միավորումների նյութերի հիման վրա:

արդյունաբերության մեջ ֆոնդազինվածության հավելածը վերջին 12 տարիներին կազմել է 112,0%: Այն եղել է աշխատանքի արտադրողականության աճի գլխավոր գործոնը, որի տեմպի հավելածն այդ ժամանակաշրջանում կազմել է 75,0%: Վերլուծությունը ցույց է տալիս, որ ֆոնդազինվածության բարձր աճ բնորոշ է նաև ճյուղի առանձին միավորումներին: Դա, անկասկած, արտացոլում է արդյունաբերական արտադրության ինտենսիվացման կարևորագույն ուղղություններից մեկը, որը որոշակի դեր է կատարում նրա արդյունավետության, մասնավորապես աշխատանքի արտադրողականության բարձրացման գործում: Այսպես, 1970—1982 թթ. Սոյուզէլեկտրաապարատ և Սոյուզէլեկ-

Ազդուսակ № 1

Ֆոնդազինվածության, մեքենազինվածության և աշխատանքի արտադրողականության աճը էլեկտրատեխնիկական արդյունաբերության միավորումներում 1970—1982 թթ. տոկոսներով (1970 թ. = 100%)

Միավորներ	Ֆոնդազինվածություն		Մեքենազինվածության		Ֆոնդազատույց		Աշխատանքի արտադրողականություն	
	1975	1982	1975	1982	1975	1982	1975	1982
ՍՍՀՄ էլեկտրատեխնիկական արդյունաբերություն	131,0	212,0	—	—	102,3	80,2	138,0	175,0
այդ թվում								
ՀԱՄ Սոյուզէլեկտրաառանձաշ	135,1	156,2	146,7	217,4	95,2	97,4	132,5	172,2
ԱՄ «Հայէլեկտրամեքենա»	123,0	147,1	131,6	153,8	97,5	99,1	120,5	145,3
ՀԱՄ Սոյուզէլեկտրալույս»	125,1	193,7	140,2	231,5	124,5	117,5	156,6	248,1
ԱՄ «Հայէլեկտրալույս»	115,2	162,4	128,6	193,6	129,1	138,3	149,0	237,6
ՀԱՄ Սոյուզէլեկտրաապարատ»	159,1	298,3	179,1	327,9	103,5	83,4	164,4	233,8
ԱՄ «Հայէլեկտրաապարատ»	173,9	215,6	142,9	168,2	112,7	132,8	192,5	284,3
ՀԱՄ Սոյուզէլեկտրամաշ»	144,1	289,7	225,0	324,1	96,3	77,3	136,9	242,7
ԱՄ «Հայէլեկտրամաշարժիչ»	160,7	207,8	168,8	289,3	90,7	109,7	146,2	243,5

տրրամաշ» համամիութենական արդյունաբերական միավորումներում ֆոնդազինվածությունն աճել է մոտ 3 անգամ: Այս ցուցանիշը ավելի քան երկու անգամ աճել է դրանց կազմի մեջ մտնող «Հայէլեկտրաապարատ» և «Հայէլեկտրաշարժիչ» արտադրական միավորումներում: Մոտավորապես 1,5 անգամ ֆոնդազինվածության աճ է տեղի ունեցել «Սոյուզէլեկտրամաշ», «Հայէլեկտրամեքենա» և «Հայէլեկտրալույս» միավորումներում: Ֆոնդազինվածության աճի այս միտումը գոյություն ունի արդեն ավելի քան 15 տարի: Սակայն միշտ էլ, որ այն ուղեկցվում է ֆոնդազատույցի համապատասխան աճով: Ազդուսակի տվյալներից երևում է, որ ՍՍՀՄ էլեկտրատեխնիկական արդյունաբերության մեջ ուսումնասիրվող ժամանակաշրջանում ֆոնդազատույցը նվազել է 19,8 նիշով: Այս տեսակետից հանրապետության էլեկտրատեխնիկական արդյունաբերությունը ձեռնարկությունները գտնվում են համեմատաբար բարվոք վիճակում: Չնայած նրան, որ համամիութենական արդյունաբերական համարյա բոլոր միավորումներում հետազոտվող ժամանակաշրջանում տեղի է ունեցել ֆոնդազատույցի նվազում (բացի «Սոյուզէլեկտրալույսից», մեր հանրապետության բոլոր միավորումներում այն աճել է կամ ծայրահեղ դեպքում մնացել է նույն մակարդակին («Հայէլեկտրամեքենա» միավորում): Այսպիսով, համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ մեր հանրապետության բոլոր միավորումներում արտադրության արդյունավետությունը բնութագրող կարևոր ցուցանիշներից մեկը՝ ֆոնդազատույցի ցուցանիշը, բարձր է միջին ճյուղայինից:

Համամասն է պատկերը նաև աշխատանքի արտադրողականության ցուցանիշի գծով: Անհրաժեշտ է նշել, որ վերջին 15 տարիներին աշխատանքի արտադրողականության մակարդակն էլեկտրատեխնիկական արդյունաբերության ճյուղում աճել է 77%-ով, որի հաշվին 1981 թ. ստացվել է արտադրանքի հավելածի 94%-ը: Ե՛լ ավելի արագ տեմպերով է այն աճել առանձին միավորումներում: «Հայէլեկտրաապարատ», «Հայէլեկտրաշարժիչ» միավորումներում այն գերազանցում է ոչ միայն ՍՍՀՄ էլեկտրատեխնիկական արդյունաբերության ճյուղի միջին ցուցանիշը, այլև համապատասխան ենթաճյուղի ցուցանիշը: «Հայէլեկտրալույս» միավորումում այն մոտ է ենթաճյուղի միջին մակարդակին և միայն «Հայէլեկտրամեքենա» միավորումում է այս ցուցանիշը որոշ չափով դիջում միջին ճյուղայինին: Հենց այս միավորումում էլ այդ ժամանակամիջոցում համեմատաբար ցածր տեմպերով է աճել ֆոնդազինվածությունը, որը և անուղղակիորեն վկայում է այս երկու ցուցանիշների միջև զոյություն ունեցող սերտ կապի մասին:

Հայաստանի էլեկտրատեխնիկական արդյունաբերության ձեռնարկություններում ֆոնդազինվածության դերը աշխատանքի արտադրողականության բարձրացման մեջ հետազայում էլ ավելի է աճելու Այսպես, եթե տասներորդ հնգամյակում «Հայէլեկտրալույս» միավորումում ֆոնդազինվածության հավելածի յուրաքանչյուր տոկոսին ընկնում էր աշխատանքի արտադրողականության 1,7% հավելած, ապա 11-րդ հնգամյակում այն կկազմի 2,3%: «Հայէլեկտրամեքենա» միավորումում համապատասխան ցուցանիշները կկազմեն 0,9 և 1,1, «Հայէլեկտրաապարատում»՝ 1,8 և 2,4, «Հայէլեկտրաշարժիչում»՝ 1,9 և 2,2%:

Աշխատանքի արտադրողականության և նրա ֆոնդազինվածության միջև փոխադարձ կապի հետադրոտումը նպատակահարմար է նատարել աշխատանքի մեքենազինվածության ցուցանիշի միջոցով: Վերջինս հաշվարկվում է հիմնական արտադրական ֆոնդերի ակտիվ մասի և աշխատողների թվաքանակի հարաբերությամբ: Հետազոտվող միավորումներում մեքենազինվածության և աշխատանքի արտադրողականության ցուցանիշների միջև կապը բացահայտելու համար, ինչպես ցույց է տալիս վերջին տասներկու տարվա ցուցանիշների վերլուծությունը, կարելի է օգտագործել հետևյալ տիպի գծային հավասարում՝ $n = a + bM$, որտեղ n -ը աշխատանքի արտադրողականությունն է, M -ը՝ մեքենազինվածությունը, a և b -ն՝ ուղղորդող գործակիցներն են: «Հայէլեկտրամեքենա» միավորման համար նշված կախվածությունը ունի հետևյալ տեսքը՝ $n = 9,698 + 0,0011M$: Այս հավասարման կորելյացիոն կապի սեղմելիության գործակիցը (r) հավասար է 0,847-ի, որը վկայում է աշխատանքի արտադրողականության և ակտիվ ֆոնդազինվածության ցուցանիշների սերտ կապի մասին: Կորելյացիայի գործակիցի մեծությունը բավականին բարձր է նաև մյուս արտադրական միավորումներում: Այսպես, «Հայէլեկտրալույսում» այն հավասար է 0,823-ի, «Հայէլեկտրաշարժիչում»՝ 0,763-ի, «Հայէլեկտրաապարատում»՝ 0,689-ի: Կորելյացիայի այսպիսի բարձր գործակիցները վկայում են, որ ֆոնդազինվածությունը, որպես տեխնիկական առաջադիմության կարևոր ցուցանիշ, սերտորեն կապված է աշխատանքի արտադրողականության ցուցանիշի հետ: Փոխկապակցվածության այսպիսի քանակական զնահատումները կարող են օգտագործվել աշխատանքի արտադրողականության մակարդակը հռաճակարային պլաններում հաշվարկելիս:

Միանգամայն այլ է պատկերը էլեկտրազինվածության ցուցանիշի օգտագործման դեպքում: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ գերակշռողն էլեկտրազինվածության նկատմամբ աշխատանքի արտադրողականության առաջանցիկ տեմպերով աճի միտումն է: Բանվորների էլեկտրազինվածությունը, որն այս կամ այն չափով արտացոլում է օգտագործվող աշխատանքի գործիքների ուժային բնութագրերը, տեխնիկական առաջադիմության կարևոր ցուցանիշներից է: Սակայն աշխատանքի գործիքների օգտակար հատկությունները չեն սահմանափակվում միայն էլեկտրաշարժիչի հզորությամբ: Այդ

պատճառով էլ լեկտրատեխնիկական արդյունաբերության ճյուղում աշխատանքի արտադրողականության հաշվարկներում աշխատանքի էլեկտրազինվածությունը կարող է օգտագործվել միայն որպես օժանդակ, լրացուցիչ ցուցանիշ: Այդ է վկայում նաև հետազոտվող միավորումներում աշխատանքի արտադրողականության և նրա էլեկտրազինվածության միջև կապի սեղմվածության ցածր մակարդակը. այսպես, «Հայէլեկտրամեքենա» միավորումում կորելյացիայի գործակիցը (r) կազմում է 0, 341, «Հայէլեկտրալուսում»՝ 0,274, «Հայէլեկտրապարատում»՝ 0, 312, «Հայէլեկտրաշարժիչում»՝ 0, 223: Կորելյացիոն գործակիցի այսպիսի արժեքները թույլ են տալիս եզրակացնելու, որ էլեկտրատեխնիկական արդյունաբերության ճյուղում աշխատանքի արտադրողականության աճը պլանավորելիս էլեկտրազինվածության աճի տեսակերի ուղղակի օգտագործումը նպատակահարմար չէ:

Հանրապետության էլեկտրատեխնիկական արդյունաբերության միավորումները, ինչպես ցույց են տալիս հետազոտությունները, իրենց տեխնիկատնտեսական ցուցանիշների մակարդակով առաջատար տեղ են գրավում համապատասխան ենթաճյուղերում: Սակայն տեխնիկական առաջադիմության պոտենցիալի օգտագործման տեսակետից դրանք դեռևս շատ անելիքներ ունեն: Այդ մասին են խոսում տեխնիկական առաջադիմության առանձին ուղղություններով աշխատանքի արտադրողականության հավելածի վրա ունեցած ազդեցության վերլուծության տվյալները:

Աղյուսակ № 2-ում հաշվարկված են տեխնիկական առաջադիմության և նրա առանձին ուղղությունների ազդեցությունը աշխատանքի արտադրողականության հավելածի վրա (ըստ աշխատողների հարաբերական տնտեսման): Քանի որ տեխնիկական առաջադիմության միջոցառումների տնտեսական հետևանքները հաճախ երևան են գալիս մի քանի տարի անց, տարեկան կտրվածքով հաշվարկված ցուցանիշները չեն կարող իրական պատկերացում տալ որոշակի միտումների գոյության մասին (այս նկատառումով հաշվարկված են միջինացված ցուցանիշները ըստ հնգամյակների): Աղյուսակի տվյալներից երևում է, որ ընդհանուր առմամբ գիտատեխնիկական առաջադիմության հաշվին ՀՄՄՀ էլեկտրատեխնիկական արդյունաբերության մեջ աշխատանքի արտադրողականության հավելածի տեսակարար կշիռը վերջին երեք հնգամյակներում ունի աճի միտում: Այն 9-րդ հնգամյակի 51,8%-ից ներկայումս հասել է 58,3%-ի: Նման միտումը բնորոշ է հանրապետության էլեկտրատեխնիկական արդյունաբերության բոլոր միավորումներին, բացի «Հայէլեկտրամեքենա» միավորումից, որտեղ 11-րդ հնգամյակում դիտվում է այս ցուցանիշի անկում:

Անհրաժեշտ է նշել, որ աշխատանքի արտադրողականության աճի վրա վճռական ներգործություն ունեն գիտատեխնիկական առաջադիմության այնպիսի ուղղություններ, ինչպիսիք են առաջադիմական տեխնոլոգիայի ներդրումը, արտադրական պրոցեսների մեքենայացումը և ավտոմատացումը: 11-րդ հնգամյակի երեք տարիներին այս ուղղությունների հաշվին ապահովվել է գիտատեխնիկական առաջադիմությամբ պայմանավորված աշխատանքի արտադրողականության աճի 85,6%-ը: Ընդ որում, գերակշռող նշանակություն ունի արտադրության մեքենայացումն ու ավտոմատացումը: Չնայած ճյուղի բոլոր միավորումներում աշխատանքի արտադրողականության հավելածի հիմնական մասն ապահովվում է գիտատեխնիկական առաջադիմության այս երեք ուղղությունների հաշվին, դրանց հարաբերակցությունն առանձին միավորումներում միատեսակ չէ: Այսպես, վերջին երեք հնգամյակներում «Հայէլեկտրալուս» և «Հայէլեկտրաշարժիչ» միավորումներում գերակշռողն արտադրության մեքենայացման և ավտոմատացման ուղղությունն է, այն դեպքում, երբ «Հայէլեկտրամեքենա» և «Հայէլեկտրալուս» միավորումներում աշխատանքի արտադրողականության ավելի մեծ աճ է ապահովել առաջավոր տեխնոլոգիայի ներդրումը:

Այսպիսի վերլուծությունը, անկասկած, կարևոր նշանակություն ունի աշ-

խատանքի արտադրողականության բարձրացման մեջ առանձին գործոնների դերը բացահայտելու տեսանկյունից: Այն հնարավորությունն է տալիս որոշել, թե ո՞ր գործոններին պետք է առավելություն տալ այս կամ այն միավորումում աշխատանքի արտադրողականության ավելի բարձր աճ ապահովելու համար: Դա հատկապես կարևոր է, եթե նկատի ունենանք, որ վերջին տարի-

Աղյուսակ № 2

Գիտատեխնիկական առաջադիմության հաշվին աշխատանքի արտադրողականության հավելանքի դինամիկան 1970—1983 թթ. ՀՍՍՀ էլեկտրատեխնիկական արդյունաբերության մեջ (% - ներքև)

Ցուցանիշներ	Տարիներ		
	1971—1975 թթ.	1976—1980 թթ.	1981—1983 թթ.
ՀՍՍՀ էլեկտրատեխնիկական արդյունաբերություն			
աշխատանքի արտադրողականության հավելանքի հաշիվ			
գիտատեխնիկական առաջադիմության	51,8	56,4	58,3
այդ թվում՝ առաջավոր տեխնոլոգիայի ներդրման	19,1	24,8	23,9
արտադրության մեքենայացման և ավտոմատացման	23,3	34,4	26,0
այլ միջոցառումների	5,4	2,8	8,4
այդ թվում			
ԱՄ «Հայէլեկտրամեքենա»			
աշխատանքի արտադրողականության հավելանքի հաշիվ			
գիտատեխնիկական առաջադիմության	57,5	58,6	32,8
այդ թվում՝ առաջավոր տեխնոլոգիայի ներդրման	31,9	26,1	18,5
արտադրության մեքենայացման և ավտոմատացման	22,1	28,2	12,6
այլ միջոցառումների	3,5	4,3	1,7
ԱՄ «Հայէլեկտրալույս»			
աշխատանքի արտադրողականության հավելանքի հաշիվ			
գիտատեխնիկական առաջադիմության	34,4	37,4	34,6
այդ թվում՝ առաջավոր տեխնոլոգիայի ներդրման	18,3	20,2	20,4
արտադրության մեքենայացման և ավտոմատացման	13,8	13,6	11,4
այլ միջոցառումների	2,3	3,6	2,8
ԱՄ «Հայէլեկտրապարատ»			
աշխատանքի արտադրողականության հավելանքի հաշիվ			
գիտատեխնիկական առաջադիմության	45,4	75,3	70,3
այդ թվում՝ առաջավոր տեխնոլոգիայի ներդրման	17,2	20,1	26,6
արտադրության մեքենայացման և ավտոմատացման	24,1	40,0	34,4
այլ միջոցառումների	4,1	15,2	5,1
ԱՄ «Հայէլեկտրաշարժիչ»			
աշխատանքի արտադրողականության հավելանքի հաշիվ			
գիտատեխնիկական առաջադիմության	33,2	35,4	60,0
այդ թվում՝ առաջավոր տեխնոլոգիայի ներդրման	8,8	3,0	2,0
արտադրության մեքենայացման և ավտոմատացման	18,6	23,7	28,0
այլ միջոցառումների	5,8	8,7	30,0

ներին արդյունաբերության մեջ նկատվում է աշխատանքի արտադրողականության մակարդակի որոշ իջեցում: Ինչպես նշում է ակադ. Տ. Խաչատուրովը, «արդյունաբերության մեջ աշխատանքի արտադրողականության աճի տարեկան տեմպերն ութերորդ հնգամյակի 5—6%-ից վերջին տարիներին իջել են մինչև 3—4%: Որպեսզի պատասխանենք այն հարցին, թե կոնկրետ ո՞րն է այդ իջեցման պատճառը, անհրաժեշտ է աշխատանքի արտադրողականության դինամիկայի գործոնային վերլուծություն: Վերջին տարիներին այդպիսի վերլուծություն չի կատարվել, սակայն այն անհրաժեշտ է, որպեսզի ճիշտ որոշվեն աշխատանքի արտադրողականության բարձրացման միջոցառումները»:

№ 2 աղյուսակի տվյալների վերլուծությունը նույնպես այս հարցին վերջնական պատասխան տալ չի կարող: Պորբլեմն այն է, որ աշխատողների հարաբերական տնտեսման միջոցով առանձին ուղղությունների ազդեցության բացահայտումը ցույց է տալիս միայն կենդանի աշխատանքային ծախսումների տնտեսման չափը, որն ամբողջությամբ չի բնութագրում արտադրության արդյունավետության բարձրացման աստիճանը: Այդ իսկ պատճառով գիտատեխնիկական առաջադիմության այնպիսի կարևոր ուղղություն, ինչպիսին է արտադրանքի նոր տեսակների յուրացումը (որը տվյալ ձևն արկությունում անմիջականորեն աշխատուժի հարաբերական տնտեսում չի ապահովում) այլ միջոցառումների շարքում ունի շատ ցածր տեսակարար կշիռ: Այս տեսակետից արտադրության արդյունավետությունն ավելի լրիվ կարող է բնութագրել հասարակական աշխատանքի արտադրողականության ցուցանիշը, որը հաշվի է առնում ինչպես կենդանի, այնպես էլ առարկայացած աշխատանքային ծախսումների տնտեսումը ժողովրդական տնտեսության մեջ:

Հանրապետության էլեկտրատեխնիկական արդյունաբերության ճյուղում կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ նոր արտադրատեսակների յուրացումը ժողովրդական տնտեսության մեջ գիտատեխնիկական առաջադիմության առավել արդյունավետ ուղղություններից է: Եթե ճյուղի ձեռնարկություններում առաջավոր տեխնոլոգիայի ներդրման միջոցառումները 1975—1983 թթ. ապահովել են գիտատեխնիկական բոլոր միջոցառումներից ստացված ժողովրդատնտեսական էֆեկտի մոտ 25%-ը, արտադրության մեքենայացման և ավտոմատացման միջոցառումները՝ ավելի քան 20,0%-ը, ապա արտադրանքի նոր տեսակների յուրացումից ստացված ժողովրդատնտեսական էֆեկտը կազմել է 45—50,0%: Եթե նոր տեխնիկայի ուղղությամբ ներդրված յուրաքանչյուր միջոցառում ապահովել է միջին 6,6 հազ. ռուբլու տնտեսական էֆեկտ, ապա յուրացված յուրաքանչյուր նոր արտադրատեսակից ժողովրդական տնտեսությունը ստացել է 42,4 հազ. ռուբլու տնտեսում: Դա բացատրվում է նրանով, որ արտադրանքի նոր տեսակներից ստացվող էֆեկտը հիմնականում ի հայտ է գալիս ոչ թե արտադրության, այլ օգտագործման, շահագործման ոլորտում:

Այլ է վիճակը հաշվողական տեխնիկայի ներդրման բնագավառում: Ինժեներատեխնիկական աշխատողների աշխատանքի արդյունավետության բարձրացումն ապահովվում է կառավարման ավտոմատ համակարգերի, ինֆորմացիայի հավաքման, կուտակման և մշակման համակարգերի, հաշվողական կենտրոնների, գործավարության մեքենայացման համակարգերի ստեղծմամբ: Աշխատանքի արտադրողականության բարձրացման մեջ այս գործոնի դերը գնալով պետք է մեծանա: Սակայն ճյուղում վերջին 10 տարիներին այս ուղղությամբ իրականացված միջոցառումներն աշխատողների հարաբերական տնտեսում չեն ապահովել, չնայած այդ ուղղությամբ կատարված ծախսերն աճել են ավելի քան 15 անգամ: Դա վկայում է ճյուղում հաշվողական տեխնիկայի օգտագործման ցածր արդյունավետության մասին:

7 «Наука и актуальные проблемы развития народного хозяйства. Сессия общего собрания АН СССР 13—14 декабря 1979 г.», М., 1980, с. 133—134.

եվ այսպես, աշխատանքի արտադրողականությունը պլանավորելիս վերը նշված հաշվարկման երկու մեթոդները ոչ միայն միմյանց չեն հակասում, այլ ընդհակառակը՝ լրացնում են մեկը մյուսին: Հեռանկարային պլանները կազմելիս ճյուղում և նրա առանձին միավորումներում անհրաժեշտ է օգտագործել պլանավորման խոշորացված մեթոդը, հիմք ընդունելով ակտիվ ֆոնդադինվածության ցուցանիշը: Հետագայում, տարեկան և հնգամյա պլանները կազմելիս անհրաժեշտ է բացահայտել դիատեսիսիկական առանձին միջոցառումների ազդեցությունն աշխատանքի արտադրողականության ցուցանիշի վրա, որոշել 1% աշխատանքի արտադրողականության աճ ապահովելու համար յուրաքանչյուր ուղղությամբ կատարվող անհրաժեշտ ծախսերի մեծությունը: Դա հնարավորություն կտա ճյուղի կամ միավորումների կապիտալ ներդրումների լիմիտի սահմաններում նիշտ որոշել և ընտրել տեսիսիկական առաջադիմության այն ուղղությունները, որոնք արտադրողական ուժերի զարգացման տվյալ մակարդակում կապահովեն առավել բարձր արդյունավետություն:

ОЦЕНКА ВЛИЯНИЯ ТЕХНИЧЕСКОГО ПРОГРЕССА НА РОСТ ПРОИЗВОДИТЕЛЬНОСТИ ТРУДА (на примере электротехнической промышленности)

АРМЕН ШАМШЯН

Резюме

На современном этапе развития социалистической экономики темпы роста производительности труда во многом определяются уровнем технического прогресса. Поэтому практическая сторона установления правильных соотношений между технико-экономическими показателями и производительностью труда приобретает важное значение. Корреляционный анализ технической вооруженности и производительности труда по производственным объединениям электротехнической промышленности позволил установить наличие тесной связи между показателями производительности и машиновооруженности труда. Использование этих зависимостей послужит повышению научного уровня и точности плановых расчетов показателя производительности труда на перспективу. Проведенные в этом аспекте исследования способствовали также выявлению роли технического совершенствования производства в обеспечении повышения производительности труда.